



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/11/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

17 հունվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարությանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի հունվարի 17-ին քննելով ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Աշոտի Սարգսյանի ընտանիքի անդամ Նարինե Սլավիկի Մուրադյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի» հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1 հոդվածով, իրականացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգում, որի արդյունքում պարզվել է, որ ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արմեն Աշոտի Սարգսյանը հաշվետու տարում Կուսակցությանը կատարել է 2,490,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություն: Կուսակցության տարեկան հաշվետվությունում առկա տվյալների արժանահավատության ստուգման նպատակով իրականացվել է նաև հայտարարատու պաշտոնատար անձ հանդիսացող նվիրատու՝ ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արմեն Աշոտի Սարգսյանի հայտարարագրերի ստուգում:

1.2 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, իրականացրել է նաև Արմեն Սարգսյանի կնոջ՝ Նարինե Սլավիկի Մուրադյանի կողմից 2024 թվականի մայիսի 10-ին ներկայացված «Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի» հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) ստուգում, որի արդյունքում արձանագրվել է անհամապատասխանություն, այն է՝ Նարինե Մուրադյանի կողմից ներկայացրած Հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում չի հայտարարագրվել 1,039,743 ՀՀ դրամի չափով եկամուտը: Հանձնաժողովը, 2024 թվականի դեկտեմբերի 5-ին Նարինե Մուրադյանին հասցեագրված թիվ 01/3922/2-2024 գրությամբ վերջինիս հրավիրել է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշների հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման՝ գրությունը ստանալուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին: Նշված գրությունը Նարինե Մուրադյանը ստացել է 2024 թվականի դեկտեմբերի 12-ին (հիմք՝ 2024 թվականի դեկտեմբերի 12-ին Նարինե Մուրադյանի կողմից էլեկտրոնային փոստով գրության ստացման հաստատում):

1.3 2024 թվականի դեկտեմբերի 19-ին պատշաճ ծանուցված Նարինե Մուրադյանի բացակայությամբ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի

հատկանիշների հիման վրա կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 748/24 արձանագրությունը:

1.4 Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 8-ին Նարինե Մուրադյանի էլեկտրոնային փոստին հասցեագրել է թիվ 01/31-2025 գրությունը՝ հրավիրելով 2025 թվականի հունվարի 17-ին, ժամը 15:30-ին Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշների հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության: Նշված գրությունը Նարինե Մուրադյանը ստացել է 2025 թվականի հունվարի 8-ին (հիմք 2025 թվականի հունվարի 8-ին Նարինե Մուրադյանի կողմից էլեկտրոնային փոստով գրության ստացման հաստատում):

2. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումն ու պարզաբանումները.

2.1 Նարինե Մուրադյանի կողմից դիրքորոշում կամ պարզաբանում չի ներկայացվել:

2.2 Հայտարարագրերի ստուգման արդյունքում Կուսակցությանը 2,490,000 ՀՀ դրամի նվիրատվությունն օրինական եկամուտներով հիմնավորված չլինելու փաստի վերաբերյալ Արմեն Սարգսյանը Հանձնաժողով ներկայացված պարզաբանմամբ հայտնել է, որ նվիրատվության գումարի մաս կազմող՝ 1,039,743 ՀՀ դրամի չափով գումարը հանդիսացել է կնոջ՝ Նարինե Մուրադյանի եկամտային հարկի վերադարձված գումարը:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով թիվ ՎԻՎ/11/25 գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի ուսումնասիրություն, հաստատված է համարում հետևյալը.

3.1 Նարինե Սլավիկի Մուրադյանը 2024 թվականի մայիսի 10-ին ներկայացրած Հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում հայտարարագրել է 3,818,146 ՀՀ դրամի չափով աշխատանքի վարձատրության գումար:

3.2 Հայտարարագրի Գ.1.2 «Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» ենթաբաժնում հայտարարագրել է

[REDACTED]
ընկերություններում առկա

հիփոթեքային վարկերի մայր գումարի մնացորդի չափը:

3.3 Վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից ձեռքբերված [REDACTED] ՓԲԸ բանկային հաշվի [REDACTED] քաղվածքի ուսումնասիրության համաձայն՝ Նարինե Մուրադյանը 2023 թվականի հունվարի 01-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար ստացել է 1,039,743 ՀՀ դրամ եկամտային հարկի վերադարձված գումար:

3.4 Նարինե Սլավիկի Մուրադյանը Հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում չի հայտարարագրել որպես եկամուտ 1,039,743 ՀՀ դրամի չափով եկամտային հարկի վերադարձված գումարը:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.

4.1 ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Աշոտի Սարգսյանի ընտանիքի անդամ Նարինե Սլավիկի Մուրադյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝ եկամտի տեսակը, եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն. եկամտի չափը (գումարը), եկամտի արժույթը:

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Հայտարարագրման ենթակա են նաև սույն հոդվածի 4-րդ մասով չսահմանված այլ եկամուտները՝ նշելով դրանց տեսակները և ստացման աղբյուրները:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.6 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:**

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, **այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:**

4.8 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.9 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է գործի վարույթը կարճելու մասին որոշում բանավոր դիտողություն հայտարարելու (...) դեպքում:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ անզգուշությամբ կատարվել է խախտում, այն է՝

ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Աշոտի Սարգսյանի ընտանիքի անդամ Նարինե Սլավիկի Մուրադյանի կողմից «Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի» հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում որպես եկամուտ չի հայտարարագրվել 1,039,743 ՀՀ դրամի չափով եկամտային հարկի վերադարձված գումարը, մինչդեռ նշված գումարի վերադարձը հաստատվում է Նարինե Մուրադյանի «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲ ընկերության 2023 թվականի համար St-44-358621 հաշվի քաղվածքով: Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն

զբաղեցնող անձի, ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է **յուրաքանչյուր գործով գնահատել**, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Հինք ընդունելով վերոնշյալ իրավական կարգավորումները և վարույթի ընթացքում հատատված փաստերը, Հանձնաժողովը գտնում է, որ Նարինե Մուրադյանի Հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում 1,039,743 ՀՀ դրամի չափով եկամտային հարկի վերադարձված գումարի չհայտարարագրելն ունի նվազ նշանակություն, քանի որ Հայտարարագրի Գ.1.1 «Հաշվետու տարվա եկամուտները» ենթաբաժնում հայտարարագրել է աշխատանքի վարձատրությունը, Գ.1.2 «Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» ենթաբաժնում հայտարարագրել է [REDACTED] ընկերություններում առկա հիփոթեքային վարկերը, ինչից ողջամտորեն հետևում է ՀՀ Կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի թիվ 205-Ն որոշմամբ նախատեսված եկամտային հարկի վերադարձի հնարավոր փաստը, ինչպես նաև վարույթի նյութերում առկա է [REDACTED] ընկերության 2023 թվականի համար [REDACTED] հաշվի քաղվածքը, որով հաստատվում է եկամտային հարկի վերադարձված գումարի վերաբերյալ տվյալը:

Այսպիսով, վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ **1,039,743 ՀՀ դրամի չափով չհայտարարագրված եկամտի աղբյուրը հանդիսացել է Նարինե Մուրադյանի աշխատավարձից հարկվող հարկերից գոյացած եկամուտը, ինչը նրա կողմից հայտարարագրված աշխատավարձի և հիփոթեքային վարկերի պայմաններում ունի նվազ նշանակություն՝** ապահովելով պետական պաշտոն զբաղեցնող անձի **ընտանիքի անդամի** հանրային հաշվետվողականության, հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Աշոտի Սարգսյանի ընտանիքի անդամ Նարինե Սլավիկի Մուրադյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նարինե Սլավիկի Մուրադյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարինե Սլավիկի Մուրադյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Նարինե Սլավիկի Մուրադյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ «Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ